

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ


Տարեկան . . 12 ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆ

Երկու թիւ մէկ ծառով
Տարեկան . . 14 ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 ֆր.
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԳՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ



Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ
չեմ տրուիր

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մեր այն բաժանորդները՝ որոնք
դեռ չեն հաճած իրենց ներկայ
տարւոյ բաժնեգիրը վճարել, կը
խնդրուի որ փութացնեն: Տարւոյն
իմերորդ ամիսն ալ կը յրաւնայ.
միևնդեռ յրագրի՝ բաժնեգիրը
պետք է կանխիկ վճարել:

ՆԵՐՔԻՆ ԶԱՐԻՔՆԵՐԸ

Դրոշակի վերջին մէկ առաջնորդ
դրոշակն շահեկան կը համարինք արտա-
տպելու հետեւեալ հատուածները, ու-
րոնք կերպով մը պերճախօս ապացոյց-
ներ կրնան նկարագրել անուշով միայն
յեղափոխական կարգ մը մարդոց դէմ
տարիններէ ի վեր մեր մղած պայքարը
արդարացնելու:

Դժբախտաբար, հայ կամաւոր-
ների գոյութեան շրջանում կան և
սեւ գծեր, որ անկարելի է աչքից
թողնել: Վերջին տարիների ըն-
թացքում հայ պարբերական մա-
մուլը Սամաուտից, Մուշից, Կար-
սից և այլ տեղերից հաղորդում էր
երբեմն տխուր լուրեր այդ շրջան-
ներում ապրող «օտարականների»,
«ղաչաղների», «ֆէդայիների» ա-
սին:

Մի տեղ բռնի կերպով հայ գիւ-
ղացուց փող են շորթում, միւս
տեղ ձին խլում, մի այլ տեղ հայ-
հոյում, անպատու են: Փաստերը
տեղ տեղ ստացել են այնպիսի
քստմենքի բնաւորութիւն, որ հայ
«կամաւորների» և «անձնուէրների»
ճակատին հայ ժողովուրդը կպցրել
է «ենիչերի» անունը:

Ինչով բացատրել հայ կամա-
ւորների քստմենքի արարքները,
ի՞նչ արդարացուցի, բացատրու-
թիւն տալ նրանց կատարած «ենի-
չերական» գործողութիւններին,
ի՞նչ ասել այն ամենատարակա-
ն բարոյական սկզբունքները դաւա-
ճանողներին, որոնք ընդհանուր
Գործի անունով քողարկում են ի-
րենց կեղտոտութիւնները, կանգ
չտանելով նոյնիսկ կեղծ դրամ կրտ-
րելու առաջ:

Պատասխանը կարող է միայն
մէկը լինել—դուրս վաճառել այդ
սրիկաներին հայ շրջանից, վար-
ուել նրանց հետ այնպէս, ինչպէս
վարուելու է իսկական ենիչերիների
հետ, ինչպէս վարում են յեղա-
փոխական մարմինները մեր ազ-
գային դատին դաւաճանողների
հետ:

«Հայ կամաւորը» տարին մի եր-
կու անգամ հրացան վերցնելով,
ամիսներով պայապ նստած՝ սպա-
ռում է հայ գիւղացու արիւն-
քրտինքով վաստակած հացը—նա
դադ րում է յեղափոխական լինե-
լուց, նա դառնում է հասարակ
վարձկան և դաւաճանում յեղափո-
խականի բարձր կոչման: Երբ
«ազգի շահերի» անունով քողար-
կուած ձրիակները խոյս է տալիս
աշխատանքից և դիւրին, բայց
կեղտոտ միջոցներով վարում է ա-
պահով կեանք—նա ցեխոտում է
«հայի» պատիւը, նա հանդիսա-
նում է հայ յեղափոխականի ոխե-
րիւմ թշնամի: Չէ որ ֆէդայու
համար նոյնքան թանկ է հայ ժո-
ղովրդի հասարակական պա-
տիւը, որքան և հայ կանանց ու
կոյսերի անձեռնմխելի լինելը: Հայ
ժողովրդին ճշող և հայ յեղափո-
խականի բարոյական վարկը ձգող
«հայ ենիչերիները» և «խաչագող
յեղափոխականները» նոյնքան մեր
թշնամին են, որքան և նոյն ժո-
ղովրդին բռնաբարող տաճիկներն
ու քրդերը: Նրանց դէմ կռուելը
նոյնչափ ֆէդայու պարտքն է, որ-
չափ և հայ գիւղացու պաշտպա-
նութիւնը թալանչիների և մար-
դասպանների յարձակումների դէմ:

Հ. Թ. Դաշնակցութեան իարմին-
ներից շատերը կուտած են այս չա-
րիքների դէմ՝ պատժած են անար-
ժանեքներին, արտաքսած են կազ-
մակերպութիւնից, ծայրայեղ գէպ-
քում դիմած են նոյնիսկ մահուան
պատժի: (*)

Սակայն դա բաւական չէ:

Յեղափոխական մաքուր միջո-
լորտը սեւացնող յանցաւորներից
շատերը ազատում են «Դաշնակ-
ցութեան» հսկողութիւնից, յայ

(*) Հապա 28 սետեմբ Եւ Տիկնանց
Մասնախումբի խաչագողները...

Մ. Խ.

տարաբով իրենց՝ այլ կուտակցու-
թիւնների անդամ, նոյնիսկ դուրս՝
գոյութիւն ունեցող կազմակերպու-
թիւններից: Այն ինչ՝ նրանց կա-
տարած յանցանքները անդադառ-
նում են բոլորի վրայ, կողմնակի
կերպով ազդում են նաեւ դաշ-
նակցական շրջանների վրայ:

Զարիքը ընդհանուր է. նրա
դէմ կռուելու է ընդհանուր ուժե-
րով, առանց խտրութեան կուտակ-
ցական բաժանումների:

Դժբաղդաբար, սրանով չեն սպա-
ռում մեր ներքին չարիքները:

Ինչպէս որ լեզու հասարակա-
կան ասպարիզի վրայ փայլում են
դեռ եւս շատ «գործիչներ», ու-
րոնց ամբողջ գործունէութիւնը
«Թաղ փչելու», իրենց անձը հըռ-
չակելու մէջն է կայանում, այն-
պէս էլ յեղափոխական ասպա-
րէզում դեռ եւս շարունակում են
գոյութիւն պահպանել մարդիկ և
նոյնիսկ մարմիններ, որոնց գոր-
ծունէութիւնը մեծ մասամբ կայա-
նում է վստիւթեան անդամների
ապրուստը հոգալու և «սեփական»
օրգան հրատարակելու մէջ: Լոկ դեր
խաղալու տենչը, անձնապատա-
նութիւնը, անհատական ձգտու-
մները այնքան խոր արմատներ են
ձգել հայրենի մէջ, որ, չը նայած
ընդհանուր ցանկութեան, մինչեւ
օրս անկարելի է եղած ի մի գու-
մարել բոլոր հայ յեղափոխական
ուժերը: Հէնց ասպարէզից հեռա-
նում է մի մարմին, կամ մի անում
է միւսի հետ՝ առաջ է գալիս մի
ուրիշը, քողարկելով իր գոյու-
թիւնը այս կամ այն մասնակի
նպատակով՝ զէնք մատակարարե-
լով, պրօքազանդ անելով և այլն—
կարծես թէ նոյն խնդիրներով չեն
զբաղում արդէն գոյութիւն ունե-
ցող կուտակցութիւնները: (*)

(*) Արդեօք այս նախադասութիւնը
ակնարկութիւն մըն է Ամերիկայի նո-
բակազմ «Ինքնապաշտպանութեան
Յանձնախումբին» — Դրոշակաւորներու
կողմէ գլխաւորաբար շատագլուած—
որուն նպատակն է վտանգեալ Սա-
սունցիներու փութով զէնք հասցնել,
իր թէ — ինչպէս գտնէ այս անգամ
իրաւամբ Դրոշակի դիմել կուտայ—
գոյութիւն ունեցող Յեղ. կազմակեր-
պութեանց նպատակը ու գործունէու-
թիւնը տարբեր բան մը ըլլար:

Մ. Խ.

Օրինակ առնելով, կարծես, միջ-
նադարեան անվերջ կրօնական վե-
ճերը, երբ ամէն մի դաւանանք
«ուղղափառ» էր համարւում իր
սկզբունքները և «հերձուած» բո-
լոր մնացածները՝ մեր մի կարգ
անձկամիտ յեղափոխականները գե-
րադասում են «թիւրք դառնալ»
կամ իսպառ հրաժարուել ասպա-
րէզից, քան թէ գործել համե-
րաշխօրէն ու եւէ ալ հայ կուտակ-
ցութեան հետ:

Մոռանալով բոլոր հայ յեղափո-
խականների ընդհանուր նպատակն
ու շահը, յեղափոխականներից շա-
տերը իրար օգնելու տեղ փորում
են միմեանց ոտքերի տակ, կանգ
չեն առնում մինչեւ իսկ բացարձակ
թշնամութեան և մատնութեան ա-
ռաջ: Աւելի եւս հայրենի մէջ սա-
կաւ չեն և այնպիսի դէպքեր, երբ
միեւնոյն կուտակցութեան մար-
միններ և մինչեւ իսկ միեւնոյն
մարմնի ընկերներ, այս կամ այն
գործնական կէտին վերաբերեալ
հայեացքների տարբերութեան
պատճառով, կամ աւելի եւս վատ՝
այդ տեսակ տարբերութեամբ քո-
ղարկելով նեղ անձնական հակակ-
րութիւնները—թշնամանում են
միմեանց հետ և պատճառ դառ-
նում ներքին խռովութիւնների:

Եւ մարմինները եւ անհատները
մոռանում են, որ յեղափոխական
գործի առաջադիմութեան համար
անհրաժեշտ չէ բոլորովին միատե-
սակ հայեացքների գոյութիւնը բո-
լոր գործնական խնդիրների մէջ,
Ընդհակառակը. մեր գործունէու-
թեան պայմանները այնքան բազ-
մակողմանի են, որ միակերպ գոր-
ծունէութիւնը ամէն վայրում և բո-
լոր պայմաններում կարող է նոյն
իսկ համարուել յեղափոխական
մտքի մեռելութեան նշան, կամ
արդիւնք վերացական հողի վրայ
հիմնուած որոշումների, համամիտ
լինելով միմեանց հետ ընդհանուր
ուղղութեան վերաբերմամբ, ըն-
դունելով մեծամասնութեան կող-
մից տրուած որոշումների անհրա-
ժեշտութիւնը, բոլոր հայ յեղա-
փոխական ուժերը օգնելու են ի-
րար՝ առանց բռնանալու իրար
վրայ, առանց ճնշելու տեղական
մարմինների և նոյնիսկ անհատ-

ների ինքնուրոյնութիւնը... Բե-
ղափոխականներին բաժանելու չեն
ոչ իւրաքանչիւրի դաւանած փիլի-
սոփական հայեացքներ տար-
բերութիւնները, ոչ ալ և ալ կու-
սակցութիւններին և խմբակներին
պատկանելը: Մեր ընդհանուր շահի
տեսակէտից աւելի լաւ է օգնել
թէկուզ «սխալ» գործողին, բայց
ողնիւ և նուիրուած յեղափոխա-
կանին և ներողամիտ գտնուել քէպի
անհատի սկսած լատարած սխալ-
ները, քան թէ անպիշ վիճաբա-
նութիւններով ու քննադատութիւն
ներով չեզոքացնել միմեանց ու-
ժերը և խախտել երարխական
վարչութեան և զգուշացնել զոհե-
լիքական ազատութեան և պա-
տասխանատուութեան թանկագին
առաւելութիւնները:

Այլ կերպ անկարելի է ի մի գու-
մարել բոլոր հայ յեղափոխական
ներին, անկարելի է մտցնել հայ
յեղափոխական շրջաններում բա-
րոյականութեան և դիսցիպլինի
ան տարրական հիմքերը, առանց
որոնց չէ կարող գոյութիւն ունե-
նալ ուժեղ յեղափոխական մար-
մին:

Այն վեհ, բայց և ծանր դատի
պաշտպանութիւնը, որ սկսած է
հայ ժողովրդի լաւագոյն մասը,
պահանջում է ուժ՝ նոյնքան ֆի-
զիքական, որքան և բարոյական:

ՕՐՈՒՄԱՆ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Պօէրական խնդիրը այսօր վե-
րստին քաղաքական հրապարակը
գրաւելու վրայ է: Երկուք ու կէս
տարիի դիւցազնական ոգորումէ մը
ետքը, Պօէր ժողովուրդը երկրա-
կալին առջեւ խոնարհելու հար-

կադրուել էր. վերին ժինկի մէջ
կայացած հաշտութեան հետեւան-
քով, Պօէր զօրագունները յանձն
կառնէին իրենց զէնքերը՝ բրիգա-
նական իշխանութեանց տալու ու
էտուար է. ի մականը ճանչնալու:
Միւս կողմէ սակայն, անգլիական
կառավարութիւնն ալ ստիպեց էին
որ զիջողութեանցը մէջ թիչ մը ա-
ւելի առատաձեւն ըլլար:

Կը իշուի թէ, տարիի եր չափ
առաջ, պօէր զօրաբանակին ընդ-
հանուր հրամատարը, Լուի Պօ-
ղա յաջորդ էր Լորտ Քիչնէրի ու
Լորտ Ալֆրէտ Միլնէրի (Բարեյու-
սոյ ընդհանուր կառավարիչ) հետ
հաշտութեան մասին գահացուցիչ
համաձայնութեան մը յանգիւնը,
Պօէր հանրապետութեանց անկա-
խութիւնը զահելով հանդերձ. սա-
կայն վերջին պահուն, գաղթային
նախարարը, Մըստր Չէմպրլէն,
գոյացած համաձայնութիւնը աւ-
րեր էր. այդ օրէն կռիւը շարու-
նակուեցաւ, երկու կողմէն ալ մո-
լեգին անողորմութեամբ մը: Շա-
հոյները Պօէրները եղան. իրենց
տարուան մը գիմադրութեամբը
Անգլիոյ ցոյց տուին թէ տակաւին
ուժաւոր ըլլալէ հետեւ եւ, ու
այդպէսով զայն պարտաւորեցին որ
վերին ժինկի բանակցութեանց մէջ
նուազ խստագոյն հանձն ըլլար:

Հաշտութեան գլխաւոր մէկ պայ-
մանին համեմատ, Անգլիական կա-
ռավարութիւնը յանձն կառնեց
75 միլիոն ֆրանքի նպաստ մը
յառկացնել, պառքաւորի միջոցին
պօէր ագարակատէրերու կրած
կորուստները դարձնելու համար.
այս նպաստէն վատ կը խոստանար
ապագային մէջ չքաւորներու թե-
թեւ պայմաններով փոխարինու-
թիւն ալ ընել:

Հոս է ահա պատերազմի վեր-

ջաւորութիւնն ի վեր պօէրական
խնդրոյն առած հիմնական դար-
ձումը. համեմատաբար պօէրա-
կան կորուստներու, 75 միլիոն
նպաստը ոչ իսկ տիրող չքաւորու-
թիւնը մասամբ մեղմելու պիտի
բաւէր:

Իրենց ռաշ անկերպարան վիճա-
կին դարձան մը տանելու համար,
պօէր առաջնորդները որոշեցին
յաջորդաբար երկու միջոցի գիմել.
նախ Անգլ. կառավարութեան ա-
ռատաձեւութեանը գիմում պիտի
ընէին, ու եթէ գահացում չի կա-
րենային գտնել, իրենց տարաբաղ-
ժողովուրդին վրայ Եւրոպայի ու
Ամերիկայի ժողովուրդներուն գլխա-
սիրութիւնը պիտի հրաւիրէին,
այսպէս ալ ըրին. պօէր երեք զօ-
րավորները, Լուի Պօղա, Քիչնէ-
րիան Տէվէթ, Եօհան Տրաւրէյ. —
երեքն ալ իրենց ռաշագէտի հա-
բաւով, տիեզերական հիւսցումի
արդէն առարկան — Եւրոպա ժա-
մանելով, կատարելապէս դուռա-
տելի խոհականութեամբ մը զե-
րենք աստուածացնելու պատրաս-
տող հաղարուոր համակիրներու
ծափերէն խոյս տալու քովաբար.
տուժիւնը ունենալէ ետք, Մր.
Չէմպրլէնէ տեսակցութիւն մը
խնդրեցին. յայտնի է սեպտ. 5ի
տեսակցութեան մէջ գաղթային
նախարարին վարձուքը. Մ. Չէմ-
պրլէն յօժարեւ էր թէեւ կարգ մը
խնդիրներու մասին պօէր զօրա-
վորներու քսելիքները մտիկ ընել,
սակայն խօսակցութիւնը 75 մի-
լիոն ֆրանքի նպաստը աւելցնելու
խնդրոյն երբ եկեր էր, բաւական
անվայել կերպով ըսե՛ր էր. «Պատ-
մութեան տարեգրութեանցը մէջ
արդէն ընկճեալ թշնամիներու հան-
գէպ Անգլիոյ ներողամիտ վարձու-
քը եղակին է. եթէ դուք մոռնաւ.

լու շատ բաներ ունիք, մենք ալ
ներքին շատ բաներ ունինք»:

Այսպէս ուրեմն, յուսահատ,
Պօէր զօրավորները վերջին միջոցին,
միջազգային գլխաւորութեան դի-
մում ընելու հարկին մէջ կը գտնուին:
Արդէն Եւրոպայի ու Ամերիկայի
ժողովուրդներուն կողմը ուղղած
են, զանոնք հրաւիրելու համար
որ, յանուն մարդկային գլխութեան,
իրենց տաւելաւ ազատակները կանգ-
նելու ու իրենց սարաքաղաք որբե-
րուն ու ալիքներուն օգնելու հա-
մար ըլլալիք հանգանակութեանց
նպատակն. այս հրաւերը, հակա-
ռակ իր անմիջ ու պարզ պարու-
նակութեանը, բրիտանական վէս
եսասիրութիւնը կը գերազգրգուէ.
խորխոն՝ Անգլիոն չուզեր հանգու-
թել որ իր ողորմասիրտութեան առ-
ջեւ չնորհ չգտած ժողովուրդ մը
օտարներու գլխութեանը արժանա-
նայ: Այստեղեկութիւնը, վէստ-
միւնիստրի յրաքերէն միջեւ ազ-
գայնամուլ թերթերը, միջեւ Տէյլի
Մէյլ ու Սոսալիտարի, Անգլիական
բովանդակ մամուլը Պօէրները սաստ-
կապէս կը դատապարտին. կառա-
վարական մեծ օրաթերթին՝ Սոսալի-
տարի լեզուն մանաւանդ սպառ-
նալից է, երբ կըսէ թէ Պօէրները
Անգլիոյ բարեհաջակ մամուլները ու
Անգլիոյ թշնամիներուն միջեւ ընտ-
րութիւն ընելու հարկին մէջ գըտ-
նուելով, վերջիններուն կողմը հա-
կնցան. այս վարձուքին ծանր հե-
տեւանքը կրելու պատրաստ ըլլալու
են ուրեմն:

Տեսնենք վերջը ուր կը լանգի:
Տ. է.

Ա. ԵՐԵՎԱՆԵԱՆ (16)
ԹԻԱՊԱՐՏԸ
ՄԵԱՆ ԵՐՐՈՐԴ
ԱՐԻՒՆԱԼԻ ԹԱՌԱՎԱՆԸ...

— Ո՛հ, Աստուծոյ սիրոյն ըլլա՛յ... ատ անունը
մառնէք ձեր բերանը:
— Ի՞նչու համար, մամի՛կ:
— Անոր համար որ կառավարութիւնը քանդ ու
աւեր դարձուց այդ տունը:
— Ի՞նչ տեղադրութիւն... պատճա՛ռը:
— Պատճառը վարդան աղայի որդին էր. կըսեն
թէ աւազակութիւններ կընէ եւ երկրին մէջ խոռ-
վութիւններ կը հանէ: Բայց դուք ի՞նչ պիտի ընէք
այդ տունը...
— Ա՛խ, մամի՛կ, ժամանակով վարդան՝ աղա
ըսած մարդը Պարսկաստանի մէջ բարեկամա եղաւ:
Հիմակ որ բաղդին բերումը հոս եկա՛յ՝ կուգե՛մ զին-
քը տեսնել: Դեռ չեմ մոռցեր. ինքը յայտնած էր
ինձի թէ Արարուց եկեղեցիի փողոցը կը նըս-
տի:
— Իբրեւ է, երկու տարիի չափ այս փողոցը նըստ-
առաւ:

տեղաւ. բայց յետոյ Հայկա վանքին մէջ ունի մը
գնեց:
— Արդեօք ո՛ր է ինքը:
— Օրեր ձեզի տուաւ...
— Շատո՞նց է:
— Երեք տարի հաղիւ կայ:
— Հիւանդութիւն քաշեց:
— Ո՛հ, որդւոյն պատճառաւ ամբողջ տարի մը
բանտին մէջ չարչարուեցաւ, մինչեւ որ կեանքը
վերջացուց:
Երեք Արծրունին որ հօրը մահուան դուժը լսած
չէր, նստած տեղը դողդոջ ու սկսաւ հառա-
չիլ:
— Ո՛հ, խեղճ բարեկա՛մա, խեղճ բարեկա՛մա:
— Շատ կը սիրէի՞ք զինքը, ընդհատեց պատուը
փղձկած ձայնով մը:
— Ի՞նչ կըսէք, հոգեւոյ չափ կը սիրէի զինքը:
Մանաւանդ ինչքա՛ն բարեբաղդ պիտի ըլլայի որ
ողջ մնար եւ այսօր տեսնէր զիս, նկատել տուաւ
ներսէս Արծրունին:
— Պարսկաստանէն կուգաք:
— Ո՛հ, մամի՛կ, Ռուսիայէն կուգամ: Արեօք
վարդան աղայի բարեկամներէն մէկը չպիտի կրնամ
ճանչնալ:
— Ես անոր քոյրն եմ... միմիջեց պատուը:
— Դուք անոր քոյրն էք:
— Այո՛:
— Ուրեմն կը յայտնեմ թէ վարդան աղայի զա-
ւակը կենդանի է:
— Ինչպէ՞ս... այդ աւազակը չէ՞ մեռեր, գոչեց
պատուը սոսկումով մը լեցուած:

— Ո՛հ... կենդանի է, կրկնեց ներսէս Արծրու-
նին դողդոջով:
— Ա՛խ, Աստուած իր արեւը կտրէ, ի՞նչ ընեմ,
վրայ բերաւ պատուը՝ մորմարած ձայնով մը: Հօր
արեւը մոտենէն ետքը, խեղճ հասած աղջկան ան-
հետանալուն ալ պատճառ եղաւ:
— Միթէ՞ անոր աղջիկ մըն ալ կար:
— Հապա՞... չըսա՛ւ ձեզի:
— Չէ... խօսքն անգամ չըրաւ:
— Ո՛րք կը դառնուի... ո՛րք տեսաք զինքը:
— Ռուսաստանի մէջ հանդիպեցանք իրարու: Վեր-
ջապէս յայտնեց թէ ծերունի հայր մը ունէր, իսկ
կինը մեռած էր:
— Բնական է որ աղջկան մը վրայ խօսք չպիտի
ընէր ձեզի, որովհետեւ իր մէկնեկէն ետքը ծնած
էր ան:
— Ըսել է թէ այս քաղաքի չլինա՞ր դալ:
— Ո՛վ:
— Վարդան աղայի որդին:
— Ամենեւի՛ն: Անպատճառ խեղճ ըլլալու է որ
այս քաղաքը մտնէ:
— Կառավարութիւնն ուսկի՞ց կը ճանչնէ զինքը:
— Օ՛, եթէ կառավարութիւնը չճանչնար, կը
հաւատա՞ք որ հայ մը չգտնուի զինքը մատնելու:
— Քանի՞ տարի է որ հեռացած է այս քաղաքէն:
— Մօտաւորապէս քսան տարի կրկայ:
— Ըսել է թէ տեսնելու ըլլաք, չպիտի կարողա-
նաք ճանչնելու, անանկ չէ՞:
— Հարկա՛ւ: Որովհետեւ մեկնած ատեն պիտի
չէին բուսած: Հազիւ քսան երկու տարեկան եղած
էր:

ՅԱՆՑԱՆԲԸ ՈՐՈՒՆ Է

Դ.

28 ՍԵՏՈՒԿԻ ԽԱՉԱԳՈՂՈՒԹԻՒՆԸ

(Շար. Աստուծոյ թիւն)

Ռոստոմի նամակն ուշացաւ, ուստի հարկ տեսայ ժընէվի պիւռօյին գրել եւ խնդիրը մանրամասնութեամբ պարզել:

Արդէն լուր տարածուած էր թէ 28 սնտուկի խաչագողներէն մինչեւ Առաքել Ալթըրարմաքեան, Պաշկապի մէջ կաշիի վաճառական: Առաքելի մասին եղած տարածախոսութեանց տեղեակ էր նաեւ Վարդոն:

Գաշնակցական մը ներկայացաւ ինձ եւ յայտնեց Առաքելի Վառնա դալը, եւ յարեց թէ, Առաքելը Պ. Ս. Ի. քով ունի 2,000 ֆրանքի ապրանք եւ ինքը Պ. Ս. Ի. հաճութիւնն առած է եթէ երբէք եւ կարողանամ այդ ապրանքները գրաւել ի հաշիւ 28 սնտուկին:

Գաշնակցականէն խնդրեցի որ, կամ այն է Առաքելը անձամբ հոգնէ ինձի կամ նկարագրէ ինչպէս մէկը ըլլալը. իսկ ապրանքները գրաւելու մասին թող անհոգ ըլլայ եւ այդ խնդիրը վերջացած թող նկատէ:

Առաքելի նկարագրութիւնը առնելէս վերջ իմացայ նաեւ պանդուկի սեւեկին թիւը: Նախ գիմեցի Պ. Ս. Ի. ստուգելու թէ իրօք կը յօժարի ապրանքները ի տրամադրութեան տակ դնել մինչեւ Առաքելի հետ գործս վերջացնեմ: Պ. Ս. սիրով ընդունեց: Պանդուկը չը դառայ Առաքելը, այդքարտ մը ձգեցի, ժամադրութիւն խնդրեցի:

Յետոյ «Սատուկ» սրճարան գացի եւ հոն տեսայ թէ Վարդոն նորեկի մը քովը նստած է: պատրուակաւ մը իրենց նստած սեղանին դէմ կեցայ եւ սկսեցի Վարդոյի հետ խօսիլ: նորեկը երբ տեսաւ թէ Վարդոյի հետ խօսելով հանդերձ զինքը կը դիտեմ, սկսեց կարծրիկ եւ գլուխը ծռելով մտածել: Նո-

րեկը կը նմանէր Առաքել Ալթըրարմաքեանին: Գլխու շարժմամբ հարցոցի վարդոյին թէ ո՞վ է նորեկը: Վարդոն անտարբեր կեցաւ: չըր-թունքներուս շարժմամբ հարցոցի թէ, Առաքել Ալթըրարմաքեանն է: Վարդոն նորէն անտարբեր մնաց: Բայց տասը վայրկեան առաջ ինձ նկարագրուած դէմքով, հասակով եւ հագուստով Առաքելը ճիշդ այդ նորեկին կը համապատասխանէր: Երբ Վարդոն ըզրորովին անտարբեր կեցաւ, ալ ես մեկնեցայ, մասձելով թէ մարդ մարդու միշտ կրնայ յմանիլ:

Պահ մը վերջ Պ. Ս. Ի. գացի հարցնելու թէ Առաքելը տեսած էր: Խանութիւնը ստնելով հոն տեսայ այն նորեկը որ Վարդոյի հետ «Սատուկ» սրճարանը նստած էր: Դեռ Պ. Ս. Ի. հետ չը խօսած նորեկը ինձ մօտենալով ինքզինքը ներկայացուց «Առաքել Ալթըրարմաքեան»: Եւ յարեց թէ քարտս առած է: պատրաստ է ինձ տրամադրելի ըլլալ:

Առաքելը առաջարկեց առանձին տեղ մը երթալ: այն առին հասկցայ որ ինքը զիս կը ճանչնայ երբեք արդէն եւ Վարդոն իրեն հասկցուցած է որ 28 սնտուկի խնդիրը ձեռք պիտի առնեմ:

Առաքելը փոխանակ զիս իրեն պանդուկը եւ սեղանի տանելու, որ մօտ էր, Օթէլ Տօզրի տարաւ, ուր առանձին սեղանի մէջ փակուելով սկսեցինք խօսիլ:

Իրմէ խնդրեցի որ 28 սնտուկի խաչագողութեան խնդիրը իր գիացածին չան մանրամասնօրէն պատմէ ինձ:

Առաքելի պատմածներէն ի հարկէ ու շագործեան առնելիք կէտերը մեծքիս մէջ ամփոփեցի, նմանապէս իր հասակեան ըսածները որով զինքը արդարացի կուզէր եւ աւելի յանցանքը կը ծանրացնէր կօշկակար կարապետին վրայ: Կարապետը այդ դէպքի պատճառաւ Ռոստոմի փախած եւ հոն ապաստան գտած էր:

Առաքելի պատմածներէն պարզ եւ յստակ կերպով կերեւէր թէ այդ խաչագողութեան մէջ գլխաւոր եւ նշանաւոր խաչագողն ոչ ինքը եղած է եւ ոչ ալ կօշկակար Կարապետը, այլ վա-

րդոյին ետեւը ուրիշ խոշոր դէմքեր կային:

Առաքելի պատմութիւնը լսելէս վերջ կարգն եկած էր ինձի հարցումները: Եւ նախ: Նպատակս էր միայն գլխաւոր դերակատարներու անուններն իմանալ իրմէ: արդէն իրեն ալ յանցաւորը ըլլալը պարզ կերեւէր: Առաքել թէեւ գիտէր գլխաւոր դերակատարները, բայց չէր ուզեր ըսել եւ միշտ կուզէր իր օձիքն ազատել:

Որչափ որ աշխատեցայ անկարելի եղաւ ինձ համար Առաքելէն իմանալ այս խաչագողութեան ճարպիկ եւ նշանաւոր գողերը: ուրեմն ստիպուեցայ վերջ տալ մեր տեսակցութեան: Առաքել ուզեց իմ կարծիքս եւ համոզումս իմանալ, ու ըսի:

Այս խնդրոյն խաչագողներէն մին դուն ես, բայց եթէ յայտնես միւս խաչագողներու անուններն որ լաւ գիտես, քու յանցանքդ պիտի մեղմանայ: Իսկ քանի որ չես ուզեր անոնց անունները տալ, այդ դէպքերու արժէքն եղող 12,000 ֆրանք գումարէն պիտի գեղչեմ 2,000 ֆրանքի ապրանք որ Պ. Ս. Ի. քովէ է եւ ես գրաւեմ եւ արդէն, կը մնայ 10,000 ֆրանք, մինչեւ որ այս գումարն չը վճարես բնաւ ազատելիք չունիս:

3. Կ. ՃԱՆԿԻՒԵԱՆ
(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ղարսի ճամբով վեհ. Կաթոզիկոսը սեպտ. 6ին թիֆլիս ժամանած է, ուր 10 օր մնալու է:

— Կարս հաւաքուած գաղթական հայերը Բասենի վրայով խուժա խուժա թուրքիս կը վերադառնան: առ այժմ գաղթականները սահմանագծէն քիչ մը հեռու Բաշ-Կէօյի մէջ կը համախմբուին, ուրտեղ իրենց հաց, տրէխ, թէյ, շաքար կը բաժնուի կառավարական թոյլտուութեամբ:

— Նոր-Դարի մէջ հետեւեալը կը կարգաւք Պարսկաստանի հայ յեղափոխականներու վերաբերութեամբ: «Թուրքիայի սահմանը Պարսկաստանի հայ յեղափոխականների դէմ ապահովելու համար, Սուլթանը, լրագիրների ասելով, հրամայեց է աւելցնել թուրք սահմանապահ զօրքերի թիւը Պարսիկ սահմանագլխի հարկաւոր տեղերում: Այդ գծի վրայ մտադրութիւն կայ կառուցանել 35 բերդ կ. Պոլսից ուղարկուող առանձին յանձնաժողովից տուած տեղերում: Բացի դրանից, մտադրութիւն կայ հասան կալէում նշանակելու դարձեալ մի առանձին արտակարգ կ. միսար: Միւս կողմից, Թէհրանի թուրք դեսպանը գիմել է Պարսից կառավարութեանը յայտարարելով թէ հայ յեղափոխականներն այժմ իրենց գործունէութիւնը փոխադրած են թուրք-Պարսկական սահմանագլուխը, որի առթիւ պատշաճաւոր հրահանգներ են տրուած վանի վալուն: Դեռ պահը խնդրել է որ Պարսից կառավարութիւնը եւս իր կողմից միջոցներ ձեռք առնէ այդ յեղափոխականների դէմ»:

— Էսք-Ուէսքի մէջ Դուրիթ Բէկ կը գիէ թէ մեծ ու մանաւանդ փոքր Հայաստանի մէջ 400—500 հազար հայ մահմետականներ կը գտնուին, որոնք հայ են ցեղով, լիզով, վարքով, բարքով, զգացումով: «Վերջին տասը տարիներու մէջ, կը շարունակէ, մահմետական հայերու մէջէն անձան հետեւներ ելան: Մեր ըսածը զարմանալի թուի գուցէ, բայց հարցուցէք փորձեցէք և պիտի տեսնէք թէ ըսածս ճշմարտութիւն մըն է և գեղեցիկ ճշմարտութիւն

Ներսէս Արծրունին խոսվայոյզ կերպարանքը կուրծքին վրայ ձեռք ու վայրկեան մը զսպել ուզեց հոգեւոր ամբողջ դառնութիւնը: Յետոյ յարեց:

— Մինա՞կ էք այս տունին մէջ:
— Մինակ եմ: Ամուսինս տասը տարի է որ մեռած է: Մէկը չունիմ:

— Խիստ լաւ: Եթէ եղբորդ զաւակը պատահմամբ տունդ գալ ու ձեր գիրկը նստուի, պիտի մերմէ՞ք:
Բարեմիտ պատահին դէմքը միմեցաւ, շրթունքը դողդոջ ու խոր ինկած աչքերը լեցուեցան պղտոր արդունքներով: Ձեռքը խորշուած ճակատին վրայ դնելով մրմնջեց:

— Ինչ ըսեմ... արեւն է, կրնամ մերժել...
— Ո՛հ, այդպէ՞ս... բացառանչեց Ներսէս Արծրունին, ու չկրցաւ շարունակել իր խօսքը: Որչափ բարի էք, Աստուած իմ:

Ու զողբալով պառակն աչքերուն նայեցաւ ու թոթովեց:

— Հօրքո՛յրս... հօրքո՛յրս... ներեցէ՛ք ինձի... Ա՛յն, ներեցէ՛ք...:

Պառաւ կիւնը յուզուած վիճակով մ

մը : Հայ ցեղին մէկ կարեւոր մասըն ալ կիսակրօն և անկրօն է , ինչ են հայ բողոքականները , հայ քրիստոնեները , ինչ են այն կարգ մը գիւղացիները որոնց որդիքը (և իրենք ալ) թէ մկրտոնաւոր և թէ քրիստոնաւոր են . ինչ են կարգ մը լեռնցիները , որոնք ոչ Յիսուս ոչ Մուհամմէտ կը ճանչնան . անոնք հայերէն կը խօսին . անոնց դիմադրերը հայկական տիպարը կը ներկայացնեն . անոնց ներքին կեանքին մէջ հայկական բարքն ու սովորութիւնը կը տիրեն . անոնք հայ են եւ իսկական հայ ցեղին փառաւորագոյն տիպարնե-րէն : Չենք ուզեր խօսիլ բաւական կարեւոր շարք մը հայանուն իշխա-նական ցեղերու մասին , որոնք մեր դատաւարտելի անտարբե-րութեամբը այսօր քիւրտ կը կոչ-ուին և իրենց տգիտութեան շնոր-հիւ Սուլթանի գործիք են դար-ձեր : Բոլոր այս տարրերը մեր ցեղին , մեր ազգին թիւը զգա-լապէս կը բարձրացնեն , որովհե-տեւ անոնք թուրքիոյ մէջ գեր-նուող հայերուն վրայ մօտ մէկու-կէս միլիոն անձեր կապեցնեն :

ՀԱՎԱՍՏԻԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սուլթանըն հապէրլէրիտէն Բօ-լօնիալը Մուհամմէտ բաշա էլէի-լէրտէն Լիբանան վալիիկինէ գա-պուլ օլընմը : Մէրգուլըն ալիմ վէ հիւսնի ախլազ սահիպի պի-ր զաթ օլտըղը Սթանպուլտան պի-տիւրիմիշ տիր :

— Սէլանիքտէն թաւան սուրէթի աթիւտէ պիտիւրիմիշ տիր :

«Մօնասթըր վիլայէթինտէ պիւ-թին պուլկար քէօլլէրի , պա խու-սուս վօտէնա գազասընըն քէօլլէ-րի՝ Սեպ . 28տէ ըսեանա գալգըշտը-լար վէ պիւր գաշ թիւր գասապա-լարը իւզէրինէ հիւսնիմ իթտիլէր : Գանը միւսատէմէլէր վուգու պուլ-տը :

«Թէլէկրաֆէ օլընան իսպար իւզէրինէ Մօնասթըր վէ Սէլանիք փաթիւրի ասքէրիլէրի աճէլէթէն առաքիւր հօլլայուպ , սաքլարը ի-հաթէ իթտիլէր : Հալ տէհէլէթի տիր :

«Կէօրիւնտիկի իւզրէ , Մաքէ-թոնիատաքի Պուլկարար գօմիթէ մէմուրարընտան զիյատէսի իլէ թէլիպի օլընմըլ օլուպ , իթթի-լալտան կէրի տուրմամազ վէ սի-լահը էլտէն պըրագմամազ իշիւն գարարը գաթի վէրմիշէր :

— Սօն կիւնլէրտէ Սէլանիք ճի-վարընտա պուլկար չէթէլէրի իլէ գուգու պուլան գալկատա՝ վու-րուլան շիր պուլկարըն ճէպինտէն քեաղըտլար պուլընմըլ օլուպ , պուլկարտան անաղըլմըլ քի , Պուլ-կարար քէօրիլէրի վէ տէմիւր

հօլլարը հալայա աթմազ էֆքեմ-րընտա ըմըշլար :

Թիւրք հիւքիւմէթի մէզքիւր քեաղըտլարը էլէ կէլիտիքտէն սօնրա՝ Շարք չըմէնտըֆէրի խաթ-թընտա մէմուրիլէթտէ պուլընան Պուլկարարըն գօմիթալար իլէ միւ-նասէպաթը օլապիլէնէկինտէն շիւր-հէլէնէրէք , նաֆիտ նազըրը վա-սիթասը իլէ չըմէնտըֆէր գուլ-բանեասընա իսթարաթտա պու-լընտը : Քէզա պուլկար մէմուրար իւզէրինէ տըզգաթը արթըրտը վէ քէօրիլէրի ասքէր նէօպէթիլէր թային իթտի :

— Սիթրօվիցա իշիւն նասպ օ-լընան րուս գօնսօլօր Մ . Շէրպին Սթանպուլ հէթիլիշ օլուպ , մա-հէլի մէմուրիլէթինէ կիտէնէք տիր :

— Բուլանիա հարպ վաթօրլարը նըն հազընտա Գարատէնիլ թիւրք սահիլլէրինի կէզէնէկի մինասի-պէթլէ՝ հիւսնի գապուլ իշիւն Սուլ-թան էմիրլէր վէրմիշ տիր :

— Արիտիւք Նիքօլայէվիշ էվ-վէլէրի կիւն Պուլկարտան Սթան-պուլա կիթմիշ տիր , Տիկէր րուս ժէնէրալլար վէ զսպիթէր տախի տիւն սապս շէհրիմիլ իսքէլէ-սինտէն վաթօրը մախսուպէ Բու-սիայա միւթէվէտէհիսէն հարէքէթ իթտիլէր :

— Շէհրիմիլտէ իւրիք ֆապրի-գասընտ չսլըրմագտա պուլընան Երուսաղէմ Չալըքեան իւստ օղլու-մաճը էվվէլէրի կիւն սաղ գօլընը մա-քիւնայա գաթօրըմըլ վէ կիւն վէ-ֆաթ իթմիշ տիր :

ՏԱԽԻԼԻՅԷ

Չարիպրոտ սթասիօնընտա 4 սանտըգ տիւնամիթ պուլընմըլ տըր . մէզքիւր սանտըգլար Ալմանիատան խրիսթօ Եւփանիլըն իսթինէ կէօն . տէրիմիշ իսէտէ , սահիպի մէյ-տանա չըգմամըլ տըր : Սանտըգ-լար ասքէրիլէ տախիսինէ թէսլիմ օլընմըլ :

— Ժէնէրալ Չօնլէֆ Սօֆիատա տէրտէսթ օլտըգտան սօնրա թէք-րար Տրէնօվօյա կէօնտէրիմիշ տիր :

— Տօպրիշէ սիւրիւմիւշ օլան բօլքօվիք Նիքօլմըն տախի ֆի-րար իթմիշ օլտըղըն Սիւր հազ-մըլ տըր : Մէրգուլ Մաքէթոնիայա հախօտ Բուլանիայա կէլմիշ զանն օլընմըլ :

— Արիտիւք Նիքօլայէվիշ էվ-վէլէրի կիւն Պուլկարտան Սթան-պուլա կիթմիշ տիր , Տիկէր րուս ժէնէրալլար վէ զսպիթէր տախի տիւն սապս շէհրիմիլ իսքէլէ-սինտէն վաթօրը մախսուպէ Բու-սիայա միւթէվէտէհիսէն հարէքէթ իթտիլէր :

— Շէհրիմիլտէ իւրիք ֆապրի-գասընտ չսլըրմագտա պուլընան Երուսաղէմ Չալըքեան իւստ օղլու-մաճը էվվէլէրի կիւն սաղ գօլընը մա-քիւնայա գաթօրըմըլ վէ կիւն վէ-ֆաթ իթմիշ տիր :

Բ Ո Ւ Ս Ի Ա

Աճէմ Շահը Սեպտեմբեր 26տա թէհրանա կիթմէք իշիւն Պագու-տան հօլա չըգմըլ տըր :

— Բուս նաֆիա նազըրը Մ-վիթթին Մանչուրիայա կիթմէսի՝ հէնի հաքըլմըլ օլան պէօյիք չը-մէնտըֆէր խաթթընը ինչսա-թընտա վուգու պուլան ուլկու-սըղըզլարը թահգիգ վէ միւթէ-ճասըլարը պուլմազ վէ անլամազ իշիւն իմիշ :

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Ֆրանսանըն էն նամտար մուհար-րիւր վէ մուհսիսլէրինտէն Էմիլ Չօ-լա վէֆաթ իթմիշ տիր : Էտիպի մէրգուլմըն միւթէտաթտ րօմանլարը տիւնեանըն հէր թարաֆընտա թագտիր օլընմըլ իսէտէ , բէք ա-չըգ հազմագտա օլտըղը իշիւն պա-զրլարը այն շէտիտէն գրիթիգա իթմիշէր տիր :

Տրէյֆիւս մէօէլէսինտէ Չօլանըն հազմըլ օլտըղը մէշհուր իթհամնա-մէ քէնտիսինէ տիւնլար արթըր-միշ տըր : Իշթէ պուլ տէֆա նա-կէհան էօլմէսի տախի պիւր դարէզ-քեարլըգ սէմէրէսի զանն օլընտը-ղընտան , թահգիգաթ իճրա օլըն-մագտա տըր :

Մ Ը Ս Ը Ր

Գօրէլա խասթալըղը էյսիլմէքտէ տիր : Ֆազաթ Մըսըրը-Պալատա (վերին-Եգիպտոս) 30000 քիշի թէ-

լէֆ օլմուշ տիր : Պուլկարտան հա-լընըլ 300 քիշի էվրօպալը ըտը-լար . պուլկար տէ րուս վէ իթալի-ալը իշիւն վէ տիւքեանճըլար օ-լուպ՝ հէրի ֆէլլահլար կիպի սէր-սէրիճէ հաշարլարտը :

Գէօնիլէ Գայրուսկըն Մըսըր մուխպիրի «գօրէլանըն էօնիւնիւ ալմազ իշիւն իսլամ հաճըլարըն Մէքքէլէ կիթմէլէրինի գաթիէն մէնն իթմէք լազըմ» տէյօր :

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ , 21 Սեպտեմբեր
ԶԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ	
Վալօն Լիպ . 57-58 հքթ . 8.50 / 9.20	
Արապա լիպ . 53-62 հքթ . 7.20 / 10.20	
ԱՐԲԱ ,	
Վալօն 100 քիւ . 8.90 / 9.-	
Արապա 45-50 լիպ . հքթ . 5.- / 5.40	
ԶԱՎՏԱՐ	
Վալօն 53-54 լիպ . 6.80 / 6.90	
Արապա 6.90 / 7.-	
ՐԱԲԻՑԱ , 100 քիւսը 19.20 / 19.30	
ՖԱՍՈՒԼԻԱ 100 քիւ . 14.- / 19.-	
ԵՌԻԱՅ	
Վալօն 100 քիւ . 19.- / 10.10	
Արապա հէքթ . 5.- / 5.20	
ՄԻՍԻՐ	
Արապա լիպ . 56-57 հքթ . 6.60 / 7.20	
ՏԱՐԸ լիպ . 57-58 հքթ . 6.40 / 7.-	
Կիւնտէ 500.600 արապա վէ 25-30	
Վալօն կէլմէքտէ տիր :	
Վալօն մուլմէլէսի ալթուն ֆը-րանքէ , արապա կիւլիլէլէ , Նաթօ-լէօն 21 ֆրանք :	

ԲԱՄՈՒՔ

Վարնա մաղազալարընտա իւրիք սա-թըլարը :
Ինկիլիլ իւրիկի Ն . 8-14 10.20
» » Ն . 18-24 12.20
ԵՏԵՐԻ իւրիք Ն . 8-14 9.60
Աթըլմըլ բամբէ հօգա 1.80
Բամպուկ ֆիյաթլարը Եւքսէլէք-տէ տիր :

ՊԱԳԱՒԻՑԷ

Վարնա բիպցալարընտա պագալիյէ մալլէրին պու կիւնքի ֆիյաթը , ալ-թուն ֆրանք իլէ :
ԳԱՀՎԷ 1.55 / 1.80
ՇԷՔԻՐ ՆԷՄԵ 52
» (Բէսմէ) սանտըգ 29.-
ԲԻՐԻՆՃ Ճաթոն չուվալը 37.- / -
» Ֆիլիպէ » 34.- / -
» Ինկիլիլ » 25.50
» Բիգոն » 52.-
ԿԱԶ Սանտըղը 6.90
ՁԷՅԹԻՆ ԵԱՂԸ քիւ . 80 / - . 95
ԳՈՒՐՈՒ ԻԻԶԻԻՄ - . 30

ՍԱՐԲԱՖԻՑԷ

Նաթուլէն 20.40 ֆրանք
Օսմ . լիւրսը 22.80 ալթուն ֆրանք

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

«Վաթիլէթ» ծանօթ թատերախումբը կը ծանուցանէ թէ , Պուրկազ չոքեանա չը գտնուելուն համար , քանի մը օր իր միւնուլը յիտաճած բլլալով , «Սանդալ» սրահին մէջ երկու ներ-կայացուցներ ալ պիտի տայ :
Այս երեկոյ , շաբաթ , կը ներկա-յացուի՝ «Երկու բաղդաւոր տղաքներ» միւլեղերգ 6 արար :
«Կիզ ճոլիլը» խիստ ծիծաղաշարժ կատակերգութիւն 3 արար :
Վաղը երեկոյ , կիրակի , պիտի ներ-կայացուի՝ «Ժէնըլիէլ» 6 արար 16 պատկեր :
«Ընողը կը գտնէ» կատակերգութիւն 3 արար :
Երգ եւ պարերգ :

Одговорникъ Н. Драгулевъ

Печ. на Хр. Н. Войниковъ—Варна